Սրա տակը.

1. *Ես Շիրիկ ծառա ՝ոյ վիարան եղէ սրբոցս*
2. *եւ եառու ։Ի։ զհ։ եւ գրեցին ։Ա։ Ժամ ինձ ի տարին։*

Սրանցից դէպի արևելք, պատի շարունակութեան վերայ.

1. *Կամաւն ՝ոյ ես Յակոբ սարկ . . .* (Ռաֆֆի)
2. *ց տուի արդիւնս ի սէ կաթող . . .* (Ռաֆֆի)
3. *սալեցին եւ վիարանքս սահ . . . [մանեց]*
4. *ին ինձ ։Ա։ աւր Ժամ որ խափանէ մեր մ*
5. *եղացն տէր է։*

Որպէս շարունակութիւն հինգերորդ տողի՝

5. *Ես Անդրէաս եառու զ*
6. *արդիւնս իմ ի սէ ուխտս եւ եառուն ինձ ։Բ։ Ժամ։*

Պատի շարունակութեան վերայ կան դարձեալ արձանագրութեան մնացորդներ, որոնցից ամբողջութիւն չի դուրս գալիս։

Ա՛րդ, ո՞ր ժամանակին են պատկանում այս արձանագրութիւնները։ Սոցանից մէկը միայն ունի թուականի մնացորդ, Յովհաննէս Անեցու արձանագրութիւնը. թուականի հարիւրաւորը պակաս է, բայց հնագրական նշաններից դատելով, արձանագրութիւնը կարող է ԺԳ. դարու կամ ԺԴ. դարի առաջին կիսի գործ լինել, ուրեմն և պակաս տառը Ջ կամ Է կարող է լինել, իսկ ամբողջ թիւը ՋՃԾՋ կամ ԷՃԾՋ։ Հաւանական ենք համարում երկրորդը։

Մի ուրիշ արձանագրութիւն սրանից դէպի արևմուտք Ներսէս եպիսկոպոս Զարաբերդցու արձանագրութիւնն էր, որի ժամանակը նոյնպէս մօտաւորապէս որոշել կարելի է։ Զարաբերդի յիշատակութիւնն արդէն մատնանշում է, թէ ո՞վ պիտի լինի Ներսէս եպիսկոպոսի մօրեղբայրը։ Զարաբերդը գտնւում է Թարթառ գետի ափին՝ նորա Թրղի վտակի խառնարանում դէպի երից մանկանց վանքը տանող ճանապարհին, Դոփեանց իշխանութեան մէջ։ ԺԳ. դարի վերջերին և ԺԴ.ի առաջին քառորդին էլ ապրում էր Սարգիս եպիսկոպոս Դոփեան, որդի Գրիգոր Դոփեանի, որ Տարսայիճ Օրբէլեանի և Մինախաթունի դստեր ամուսինն էր։ Սարգիսը իբրև եպիսկոպոս յիշատակւում է 1311, 1312 թուերին եւ վախճանուած է 1233 թուին(1)*. նա վարդապետ էր ԺԳ. դարու եօթանասնական թուականների սկզբին, երբ Հաղբատի եպիսկոպոս Յովհաննէս (երրորդը նոյն դարում, նոյն վանքի նոյնանուն եպիսկոպոսներից) «թոռն Դոփին» կանգնում էր իւր Ամենափրկիչ կոչուած նշանաւոր խաչարձանը, իսկ քիչ աւելի վաղ նոյն Հաղբատում «ի վարժս կրթութեանն պարապեալ»։ Նա Յովհաննէս եպիսկոպոսի ձեռնասունն էր և եղբօրորդին, իսկապէս եղբօր թոռը, որովհետև Յովհաննէս եպիսկոպոսը Սարգսի հօր՝ Գրիգոր Դոփեանի հօրեղբայրն էր, Հասան Դոփեանի կրտսեր եղբայրը*(2)*։ Այսպիսով Ներսէս Զարաբերդցու արձանագրութեան թուականը նշանակել կարող ենք 1233 թուից յետոյ՝ մինչև դարի կէսերը։ Յովհաննէս Անեցու և Ներսէս եպիսկոպոսի արձանագրութիւններով էլ պէտք է պարզուած համարել այդ ամբողջ խմբի ծագման ժամանակը։*

Զ.

Ձեռագրական յիշատակարանների և արձանագրութիւնների այսչափ մեծ թիւը, որոնց մի մասն էլ մեր ձեռքը չեն հասել, աշակերտների և վարդապետների անունների յաճախութիւնը ապացոյց է, թէ վանքը իւր սրբութեամբ, նաև իբրև հոգեւոր կեդրոն, մեծ հռչակ էր վայելում և դիրք ունէր ԺԲ. դարի վերջերից մինչև ԺԴ.ի կէսերը, որ և հաստատում է Մանուէլ Բըջնեցին հետևեալ խօսքերով.

«Ցնծա, հրաշարան, ո՛վ համալսարան,
ուխտ հրաչակ անուն
Սքըդ մենաստան Հայու Թառ անուան,
Թառ Թարխմանութե՛»։

Այնուհետև մօտ յիսուն տարի տեղեկութիւն չունինք վիմական և ձեռագրա-

(1) *Բարխուդարեան. Արցախ. 205. 206. 290։*

(2) *Մանրամասնութիւններ կ'տեսնենք ԺԳ. գրքում։ Ձեռ. էջմ. N 2604։ Բարխ. Արց. 408։*